

գործածական չեն եղած մեր մէջ: Թարգմանութեան հետ զուգընթացաբար մտել են նաև նոր նմանակերտ անուններ, բոլորն էլ քրիստոնէական կեանքի բացատրութիւններ, հայ ժողովուրդի մտքին ու սրտին մօտիկ ու հասկանալի բառեր, որով մեր անձնանունների բառարանը կրկնապէս ընդարձակուել է: Այսպէս են Համբարձում, Զատիկ, Դալուս, Մարգար, Տիրասուր, Խաչասուր, Քրիստոսուր, Խաչերես, Մերոն, Կարապետ, Մկրտիչ, Անեսիս, Աւագ, Մաքրունի, Մերունի, Տիրունի և այլն և այլն, որոնք, սկսած այն օրից մինչև այժմ, աւելի կամ նուազ չափով գործածական են մեր մէջ: Մեր մտաւոր զարգացման պատմութեան տեսակէտով շատ հետաքրքիր էր որոշել թէ ե՛րբ է այս անունների ծագման ժամանակը:

11. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայ կրօնական անուններից զուրա կան բազմաթիւ ուրիշ անուններ, որոնք թէև հայերէնի մէջ կազմուած անուններ են, բայց քրիստոնէական հաւատալիքների շուրջը չեն պատուում, այլ իրենց իմաստով ներկայացնում են աւելի իրական կեանքը և շատ անգամ ներկայացնում են աշխարհիկ բանաստեղծական սիրուն պատկերներ: Օրինակ՝ Թուխամ — մազերը սև, Շաղոսկի — որ ոտկի է շաղում, Վարքիբեր — վարդի թերթ, Հերիմագ — հերթի ինչքան նազ ես անում: Այս շարքի անուններից են՝ Զանազան, Վարդերես, Լոյսպարոն, Նորաբել, Վարդըմպու, Անճրեւվարդ, Նորվարդ, Նորսիկին, Վարդամանուկ, Քնարիկ և այլն:

Հայ հասարակ ժողովուրդի, շինականի բնիկ, հարազատ, իւրակերտ անուններն են սրանք, որ եկեղեցական դասի պաշտած կրօնական անունների և ազնուական դասակարգի սիրած օտար անունների չըջանալու բացառիկ փայլով ցոլում են:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Երբանուշէի 2)

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԷ

ՎՍԵՄ. ԳԱԼՈՒՍԵ ԿԻՒԼՊԵՆԵԱՆԷՆ
Ս. ԱՅՈՒՌՈՅ ԺԱՌ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻՆ

Շնորհապարս զգացումներով, յանուն Տեղապահ Սրբազան Հօր, բովանդակ Միաբանութեան եւ Ս. Արուոյ ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութեան եւ աշակերտութեան, մեր արագին շնորհակալութիւնը կը յայտնենք Ս. Արուոյ բարեկամ եւ բարեբար Վսեմ. Դալուս Կիւլպենկեանին, որ ինչպէս միշտ, այս առիթով եւս ժառ. Վարժ.ի եւ Ընծայարանի կրթական ծախսի ի հաշիւ, երեք տարուան համար կը նուիրէ 1000-ական սրերին:

Ազնուական այս կերպը, օժանդակելու ազգին հոգեկան ու մտաւոր կարիքներուն, Վսեմ. Դալուս Կիւլպենկեանի իմաստութեան եւ առաքինութեան ամենեւնի ցայտուն գիծն է, բարեբարելու իր այս ձեւին մէջ բարիքի սխրագին իմաստասիրութիւն մը կայ, որուն վրայ կարելի չէ չհիանալ:

Ս. Դիւսագրի օրհնութիւնը կը հայցենք ի արեւ, մեր պատուական բարեբարին համար, ու կը մաղթենք որ Տեր երկար ու բարգաւաճ ընէ իր սարիները, յօգուտ եւ ի փառս մեր բազմակարօս ժողովուրդին եւ եկեղեցիին:

ՎՍԵՄ. ՆԵՐՍԷՍ ԿԻՒԼՊԵՆԵԱՆԷՆ

ՏԱՐԵԱՆ 360 ՍԵՐԼԻՆԻ ՏԵԻԱԿԱՆ ՈՒ
ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ
Ս. ԹԱՐԳՄԱՆԱՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Նոյն կերպով, Կիւլպենկեան ազնուական տոնմի մէկ ուրիշ ներկայացուցիչը, Վսեմ. Ներսէս Կիւլպենկեան, ի յիշատակ իր վաղամեռիկ որդւոյն Պողոսի, տարեկան 360 սրերին ի հաշիւ նուիրատուութիւն մը կ'ընէ Ս. Արուոյն հովանիին ներքեւը եղող Ս. Թարգմանչաց ազգային վարժարանին:

Տեղապահ Ս. Հօր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Ս. Թարգմանչաց Տեսչութեան եւ բազմահարիւր աշակերտութեան արագին շնորհակալութիւնը ազգին բարեբար այս պատուական հայուն եւ նուիրատուն: Աստուծային օրհնութիւնը եւ մխրատութիւնը իր ամենեւնի քաղցր սիրոյն մէջ խոցում իր հոգիին, որ գիտէ այսկերպ ազնուօրէն մխրատել ազգին զաւակները, իր կորսնցուցած աւուրիկ Պողոսիկի սիրոյն եւ յիշատակին մէջ: